

# ԲՂՆԲԵՐ

ԾՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵԱՎԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ԾՐԵՎԱՆ

2004

1

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ ИНСТИТУТ

# **ԲՂԵԲԵՐ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ**  
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ЭКОНОМИЧЕСКОГО ИНСТИТУТА

1

«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ИЗДАТЕЛЬСТВО "ТНТЕСАГЕТ"

---

ԵՐԵՎԱՆ • 2004

## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՎՈՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

### Ն. Գ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Գ. Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հայ իրավագիտական մտքի պատմության ուսումնասիրությունները վկայում են, որ ինչպես իրավունքի տեսության, այնպես էլ պետական հարկադրանքի և պատասխանատվության կիրառմանը զբաղվող ճյուղերում (քրեական, վարչական, ուղղիչ աշխատանքային, ֆինանսական) երբևէ փորձ չի կատարվել լուսաբանելու պետական, առավել ևս ֆինանսավարկային մարմինների իրավատնօրինության հիմնահարցերը:

Հայ իրավագետները միշտ խուսափել և շրջանցել են լատիներեն “jurisdictio” իրավական կատեգորիան մեկնաբանելուց, որը հավասարապես վերաբերում է բոլոր այն պետական մարմիններին, որոնք իրենց օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում իրավունք ունեն լուծելու «իրավական վեճեր» և կիրառելու իրավական պատասխանատվության այս կամ այն տեսակը:

Լատիներեն “jurisdictio” տերմինը լայն առումով ստուգաբանվում է որպես «դատավարություն»: Այն կազմված է “jus” («իրավունք») և “dico” («խոսել») բառերից և ըստ էության նշանակում է «իրավունք բանեցնել», կիրառել:

Իրավական առումով “jurisdictio”-ն արտահայտվում է օրենքով կամ այլ իրավական ակտերով համապատասխան պետական մարմնին վերապահված այն լիազորությունների համակցությամբ, որոնց ուժով իրավագործ մարմինները իրավունք ունեն քննարկելու և գնահատելու իրավական վեճը կամ իրավախախտումը և, վերջինիս բնույթից ելնելով, ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառելու համարժեք պատժամիջոցներ<sup>1</sup>:

Կարծում ենք՝ պետական կառույցների իրավապահ այս գործունեությունը հայերեն կարելի է օգտագործել «իրավատնօրինություն» եզրը (տերմինը), քանի որ “jurisdictio”-ն միայն դատական մարմինների գործունեության ձև չէ. այն հավասարապես վերաբերում է պետական բոլոր օղակներին:

Իրավաբանական գրականության մեջ լայն իմաստով օգտագործվող «իրավատնօրինություն» հասկացությունից ժամանակի ընթացքում տեսական խոր տարածայնությունների պատճառով առանձնացվել է «վարչական իրավատնօրինությունը»՝ որպես պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության իրավակիրառման ձև:

Վարչական իրավատնօրինությունը կարելի է բնութագրել որպես գործադիր և այլ իրավագործ մարմինների իրավապահ գործունեության ձև, որն ուղղված է վարչական իրավախախտումների քննարկմանն ու նրանց վերաբերյալ օրենքից բխող համապատասխան որոշումների ընդունմանը<sup>2</sup>:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Юридический энциклопедический словарь, М., “Советская энциклопедия”, 1984, էջ 414:

<sup>2</sup> Տե՛ս А. П. Шергин, Административная юрисдикция, М., “Юридическая литература”, էջ 45:

Վարչաֆինանսական իրավունքի առանձնահատկությունների առումով երբևէ ուշադրության չեն արժանացել պետական բանկի (ՀՀ կենտրոնական բանկ)՝ որպես ֆինանսական իրավունքի հատուկ սուբյեկտի վարչական և հատկապես ֆինանսական իրավատնօրինության հիմնահարցերը, որոնք շուկայական հարաբերությունների և բանկային գործառույթների իրականացման ընթացքում ապահովում են պետության ու նրա կողմից ֆինանսական իշխանության գործադրմամբ՝ երկրի սոցիալ-տնտեսական վերակառուցումն ու առաջընթացը:

ԱՊՀ մի շարք երկրների, այդ թվում և Հայաստանի Հանրապետության վարչական ու ֆինանսական օրենսդրության ուսումնասիրությունները վկայում են, որ վարկային քաղաքականության ոլորտում, հատկապես «ՀՀ վարչական իրավախախտումների մասին» օրենսգրքում Կենտրոնական բանկը չի հիշատակվում որպես վարչական հարկադրանք և պատասխանատվություն կիրառող մարմին (սուբյեկտ), մինչդեռ «ՀՀ կենտրոնական բանկի» ու «Բանկերի և բանկային գործունեության մասին» 1996 թ. հունիսի 30-ին ընդունված օրենքները Կենտրոնական բանկին օրենսդրության խախտումների համար պատժամիջոցներ կիրառելու անսահմանափակ լիազորություններ են վերապահում:

ՀՀ կենտրոնական բանկի իրավատնօրինության առարկան կազմող նյութական և պրոցեսուալ գործունեության բոլոր ձևերն ունեն առանձնահատկություններ, որոնք թխում են պետական մարմինների համակարգում ազգային բանկի երկակի կարգավիճակից, որը Կենտրոնական բանկին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում իրավունք է տալիս ըստ անհրաժեշտության, հասարակական և պետական շահերի գերակայությունից ելնելով, հանդես գալ թե՛ որպես պետական իշխանության (կառավարման) և թե՛ տնտեսական գործունեության մարմին:

Որպես տնտեսական գործունեության մարմին՝ նրա իրավական ռեժիմի առանձնահատկություններն ամրագրված են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի առաջին հոդվածում, որտեղ ասված է. «ՀՀ կենտրոնական բանկը իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է»:

ՀՀ կենտրոնական բանկի, որպես իրավաբանական անձի, կարգավիճակի կարևորությունը պայմանավորված է այն վիթխարի դերով, որ այսօր մեր պետության տնտեսական հիմքերի ամրապնդման և հզորացման գործում խաղում է բանկային վարկը:

Բանկային մարմինները Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի առանցքն են: ՀՀ բանկերի և բանկային գործառույթությունների խախտման տեսակները սահմանված են հիշատակված օրենքի 60-րդ հոդվածում, որտեղ սպառիչ կերպով թվարկված են հետևյալները.

ա) բանկի կանոնադրական հիմնադրամը կամ ընդհանուր կապիտալի տարրերը համալրվել են օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով.

բ) խախտվել են սույն օրենքի, բանկային գործունեությունը կարգավորող ուրիշ օրենքների, դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջները.

գ) բանկի, մասնաճյուղի կանոնադրությունը փոփոխվել ու լրացվել է օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով.

դ) խախտվել են բանկի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները կամ, Կենտրոնական բանկի կարծիքով, բանկն իրականացրել է այն-

պիսի գործողություններ (գործունեություն), որոնք կարող են վտանգել ավանդատուների կամ այլ պարտատերերի շահերը.

ե) խախտվել են հաշվապահական հաշվառում վարելու կանոնները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգն ու պայմանները, այդ փաստաթղթերում ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տվյալներ.

զ) բանկը չի կատարել Կենտրոնական բանկի կողմից սույն օրենքով սահմանված հանձնարարականը.

է) բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի սահմանած՝ բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից.

ը) բանկն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով չի կատարել բանկային ավանդների երաշխիքային հիմնադրամին երաշխիքային վճարների մարումը:

Կենտրոնական բանկը, ֆինանսական և բանկային օրենսդրության պահանջների խախտումներ հայտնաբերելիս, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի բանկերի նկատմամբ կիրառել հետևյալ ներգործության միջոցները (պատժամիջոցներ).

1) նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարական.

2) տուգանք.

3) բանկի ղեկավարների որակավորման վկայականից զրկում.

4) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը:

Բանկային օրենսդրությամբ սահմանված պատժամիջոցների այս համակարգը, նրա առանձին տեսակները կարող են կիրառվել անմիջականորեն, ինչպես Կենտրոնական բանկի կողմից, այնպես էլ դատական կարգով:

Ֆինանսական իրավունքի տեսության զարգացման նպատակով Կենտրոնական բանկի կողմից կիրառվող պատժամիջոցները, մեր կարծիքով, կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) բանկային օրենսդրության խախտման համար կիրառվող **հիմնական** և բ) **լրացուցիչ** պատժամիջոցների<sup>3</sup>:

Կենտրոնական բանկի կողմից անմիջականորեն կիրառվող հիմնական պատժամիջոցների շարքում անհրաժեշտ է առանձնացնել հատկապես **լիցենզիան ուժը կորցրած** ճանաչելը, որը, որպես օրենսդրության խախտման համար կիրառվող ներգործության միջոց, ըստ էության, իր բնույթով ծանր պատժամիջոց է՝ իրավական բոլոր հետևանքներով: Այս պատժամիջոցի կիրառմամբ նախկին իրավաբանական անձը փաստորեն դադարում է հետագայում գոյություն ունենալուց, բանկը զրկվում է բանկային գործունեություն իրականացնելու իրավունքից՝ բացառությամբ օրենքով նախատեսված գործարքների, որոնք ուղղված են նրա ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջոցների իրացմանն ու դրանց վերջնական բաշխմանը:

Իրավական հետևանքների տեսակետից բանկային օրենսդրության խախտման համար կիրառվող հիմնական պատժամիջոց է **բանկերի սնանկ** ճանաչումը, որը կիրառվում է դատարանների ընդունած որոշումների հիման վրա:

Բանկերի սնանկության հիմնական պատճառները Կենտրոնական բանկի կողմից ժամանակին պատշաճ ֆինանսական վերահսկողության, խնամակալության բացակայությունն է, բանկի տնտեսական նորմատիվների պահպանման նկատմամբ անփութությունը: Կան նաև մի շարք այլ սուբյեկտիվ ու օբյեկտիվ պատճառներ, որոնք բանկին կարող են հասցնել սնանկացման:

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս **Գ. Ա. Մուքիաչյան**, Ֆինանսական իրավունք (դասագիրք), Եր., 2001, էջ 322:

Կենտրոնական բանկի կողմից անմիջականորեն կիրառվող լրացուցիչ պատժամիջոցների թվին կարելի է դասել նախազգուշացումը և խախտումները վերացնելու հանձնարարականներ տալը, բանկի ղեկավարներին որակավորման վկայականից զրկելը (կարգապահական տույժ), ինչպես նաև Կենտրոնական բանկի հայցով դատարանների որոշմամբ բանկերից գանձվող տուգանքը:

Բանկային օրենսդրությամբ որպես նվազագույն պատժամիջոց կիրառվում է **նախազգուշացումը և խախտումները վերացնելու հանձնարարականը**: Ըստ էության, նախազգուշացումը և խախտումները վերացնելու հանձնարարականներ տալը օրենքի խախտման անթույլատրելիության մասին նախազգուշական միջոցներ են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր բովանդակությունը և կարող է գործադրվել որպես բանկային ինքնուրույն պատժատեսակ:

Բանկային օրենսդրության խախտման համար կիրառվող նախազգուշացումը, իրավախախտումը վերացնելու հանձնարարականը, ըստ էության, բանկային տույժի վարչական տեսակներ են, որոնք կիրառվում են բանկային օրենսդրության առավել փոքր խախտումներ կատարած այնպիսի իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք մինչև խախտումներ կատարելը վարկային ու հաշվարկային իրավահարաբերություններում եղել են կարգապահ, ունեցել դրական բնութագիր:

Կենտրոնական բանկի կողմից կիրառվող նախազգուշացումը և խախտումները վերացնելու հանձնարարականը իրավական առումով միշտ չէ, որ կարելի է համարել բանկային հարկադրանքի տեսակ, առավել ևս, որ օրենքով չեն կարգավորված նրա կիրառման ձևին վերաբերող հարցերը: Գործնականում հաճախ կիրառվում է բանավոր նախազգուշացումը, որը բանկային տույժ չէ, քանի որ համարվում է բացատրական միջոցառում: Նախազգուշացումը բանկային տույժ կարելի է համարել միայն այն դեպքում, երբ արվում է գրավոր: Նախազգուշացմամբ արձանագրվում է թույլ տրված խախտումը, և իրավախախտողին տեղեկացվում խախտման անթույլատրելիության մասին:

Նախազգուշացումը, որպես բանկային տույժ, անբաժան է խախտումը վերացնելու հանձնարարականից: Կենտրոնական բանկը նախազգուշացնում է՝ միաժամանակ սահմանելով իրավական նորմի խախտումները վերացնելու ժամկետները և գրավոր հանձնարարականով այն ուղարկում բանկային մարմնին: Հանձնարարականի կատարումը պարտադիր է նախազգուշացում ստացած բանկի համար:

Բանկային օրենսդրության խախտումների համար կիրառվող պատժամիջոցներից է **տուգանքը**, որը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով: Գումարը գանձվում է բանկի թղթակցային հաշվից՝ հօգուտ պետական բյուջեի:

Բանկերի և բանկային գործունեության մասին օրենքի 63-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր խախտման համար բանկից գանձվող տուգանքի չափը սահմանում է Կենտրոնական բանկը, և թվարկվում են խախտումների այնպիսի հիմքեր, ինչպիսիք են՝ հաշվետվություններն ուշացնելը, անարժանահավատ տեղեկություններ արտացոլելը, որոնց դեպքում դատարանի կողմից նշանակվող տուգանքի չափերը անբաղադրելի են օրենքում: Այսպես, հաշվետվություններն ուշացնելու համար կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի 5%-ը: Իսկ բանկային օրենսդրության յուրաքանչյուր այլ խախտման համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կա-

րող գերազանցել Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի 1%-ը:

Տուգանք սահմանող նորմի իմպերատիվ բնույթից դժվար չէ նկատել, որ դատարանը փաստորեն հայցադիմումը քննելիս տուգանք նշանակելու և նրա շահերը պաշտպանելու հարցում ազատ չէ. գործի փաստական հանգամանքները քննելիս որպես արդարադատության մարմին մա ինքնուրույն չի կարող որոշել մեղքի չափը և կիրառել տուգանք՝ որպես վարչական տույժի միջոց: Առավել ևս՝ ինքնուրույնաբար չի կարող փոխել տուգանքի չափերը:

Իրավական առումով, դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու, բանկային հայցերի դատական քննարկումների տևական գործընթացները կրճատելու և ժամանակը խնայելու նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ է վերանայել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունը, Կենտրոնական բանկը ճանաչել որպես վարչական տույժեր կիրառող մարմին, և տույժերի ու տուգանքների օպերատիվ կիրառման արդյունավետությունը բարձրացնելու նկատառումով՝ բանկային օրենսդրության խախտումների համար տույժերի կիրառման իրավունքը վերապահել վերջինիս:

Օրենսդրության խախտումների համար կիրառվող պատժամիջոցների թվին է դասվում **բանկի ղեկավարներին որակավորման վկայականից զրկելը**, որն իրականացվում է Կենտրոնական բանկի խորհրդի առաջարկությամբ:

Բանկի ղեկավարը (ղեկավարները) որակավորման վկայականից կարող են զրկվել օրենքները միտումնավոր խախտելու, անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք ցուցաբերելու, բանկի կամ բանկի հաճախորդների շահերին հակասող գործողություններ կատարելու և օրենքով նախատեսված այլ ղեպքերում:

Բանկը հիշյալ պատժամիջոցները կիրառելիս պետք է հաշվի առնի յուրաքանչյուր կոնկրետ դեպքի առանձնահատկությունները:

Այսօր, ավելի քան երբևէ, հանրապետության բանկային համակարգի և բանկային գործունեության կարգավորմանն ուղղված իրավական ակտերը կատարելագործման կարիք ունեն: Վերջնականորեն հստակեցված չեն Կենտրոնական բանկի՝ որպես իրավաբանական անձի կարգավիճակի հիմնահարցերը, սահմանափակ է նրա ֆինանսատնտեսական գործառնությունների շրջանակը, հատկապես «Կենտրոնական բանկի մասին» օրենքում խիստ անորոշ են սահմանված նրա՝ որպես պետական մարմինի իրավասությունը լուսաբանող հոդվածները:

Խոր հակասություններ կան «ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում վարչական տույժ կիրառող սուբյեկտների և վարչական վարույթը սահմանող նորմերի ու «Կենտրոնական բանկի մասին» օրենքի միջև: Վարչական օրենսգրքով Կենտրոնական բանկը վարչական տույժեր կիրառող մարմին չի ճանաչվում, մինչդեռ բանկային օրենսդրությամբ նրան իրավունք է վերապահված կիրառելու ինչպես վարչական նախազգուշական, կանխարգելիչ, այնպես էլ վարչական տույժեր:

Բանկային գործող օրենսդրության ուսումնասիրությունները վկայում են, որ վարչական պատասխանատվություն սահմանելիս ուղղակի վտանգվում են իրավական պատասխանատվության սկզբունքները: Այսպես, միջամտելով դատարանի գործունեությանը, Կենտրոնական բանկը իր կամքն է թելադրում դատարանին, խախտվում է արդարադատությունը որպես դատական գործա-

ույթ (այսպիսի հակասություններով է շարադրված «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 63-րդ հոդվածը):

Վերջապես, բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրության կատարելագործման նպատակով որոշ լրացումներ պետք է կատարել «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի» 16-րդ հոդվածում. տնտեսական դատարանների ենթակայությանը հանձնել վարկային իրավահարաբերություններից բխող տնտեսական վեճերը:

**Н. Г. СУКИАСЯН, Г. А. СУКИАСЯН - *Юрисдикция Центрального Банка РА и применяемая им система наказаний.*** - В данной статье предпринята попытка на основе анализа нормативных и литературных источников раскрыть понятие банковской юрисдикции, что является вполне своевременным и отвечает задаче дальнейшего совершенствования финансового права и банковского законодательства.

При рассмотрении системы банковских наказаний авторы обратили внимание на разнообразие видов наказаний и наличие весьма существенных различий между ними. Эти различия относятся не только содержанию и характеру каждого вида наказаний, но и к условиям и порядку их применения. Именно эти особенности и вызывают необходимость классификации видов банковских наказаний.

Авторы статьи впервые в финансово-правовой науке отметили о банковских наказаниях. На основе их в зависимости от меры правонарушений наказания разделяют на две группы: основные и дополнительные и освещают понятие этих групп.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՀՈԴՎԱԾՆԵՐ

|  |     |
|--|-----|
| Գ. Ե. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ - Գլոբալացումը և դրա հետևանքները -----  | 3   |
| ՅՈՒ. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ - Հայաստանում հանրային կառավարման տեսության ու պատմության ուրվագծեր -----                              | 12  |
| Ա. Խ. ՍԱՐԿՈՍՅԱՆ - Պետական գույքի մասնավորեցման արդի հիմնախնդիրները -----   | 30  |
| Մ. Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. Հ. ԱՐՇԱԿՅԱՆ - Շահույթի մաքսիմալացման մոդելների համադրական վերլուծությունը -----                  | 45  |
| Ս. Ա. ԴԱՎՈՅԱՆ - Անցումային տնտեսությամբ երկրների բազմաբնույթ վերափոխումների գնահատումը և վերլուծությունը -----           | 54  |
| Ա. Բ. ՍԱՆԱԶԱՐՅԱՆ - Ֆինանսական շուկան և դրա զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում -----                   | 64  |
| Ի. Ե. ԽԼԴԱԹՅԱՆ - Տնտեսության զարգացման տեսության հարցադրումների մասին -----  | 77  |
| Հ. Ի. ԱՂԱՍՆՅԱՆ - Տնտեսության պետական կարգավորման ինստիտուցիոնալ հիմքերը -----  | 82  |
| Ա. Հ. ՍԱՐԳՍՅԱՆ - Տնտեսության փիլիսոփայության մի քանի հարցեր -----  | 96  |
| Վ. Ա. ՄԻՐԶՈՅԱՆ - Հանրային կյանքի կայունության փիլիսոփայական ըմբռնումը -----  | 110 |
| Ն. Գ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Գ. Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ - ՀՀ կենտրոնական բանկի իրավատնօրինությունը և նրա կողմից կիրառվող պատժամիջոցները ----- | 116 |
| Ա. Լ. ԱՍԼԱՆՅԱՆ - Մասնագիտական կրթությունը և նրա ֆինանսական ապահովումը -----  | 122 |

### ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

|  |     |
|--|-----|
| Բ. Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, Լ. Մ. ՍԱՐԴԱՐՅԱՆ - Համայնքային հարկային եկամուտները և ֆինանսական համահարթեցման քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում ----- | 127 |
| Ա. Գ. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ - Կրթական բարեփոխումների հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում -----  | 138 |

### ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

|  |     |
|--|-----|
| Ս. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ա. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ - Սոցիալական արդարության և տղնտեսական արդյունավետության փոխկապվածության հարցի շուրջ ----- | 145 |
| Ա. Հ. ԿՈՉՆԱԿՅԱՆ - Պորտֆելային ներդրումները և տնտեսական աճը -----   | 152 |
| Վ. Լ. ԽԱՆՈՒՄՅԱՆ - Հայաստանի Հանրապետության տնտեսական ինտեգրման քաղաքականությունը -----                                     | 157 |

### ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

|  |     |
|--|-----|
| Ա. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ - Հայաստանի տնտեսական պատմությունը վաղ ժամանակներից մինչև մեր օրերը ----- | 164 |
| Ռ. Ա. ԵՐՎԱՆԴՅԱՆ, Վ. Ա. ՄԻՐԶՈՅԱՆ - Տնտեսության հանրային կառավարման հիմնախնդիրները -----   | 167 |

### ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

|   |     |
|---|-----|
| Ա. Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ - ԵՊՏԻ 18-րդ գիտական նստաշրջանը -----                     | 170 |
| Ա. Ս. ԲԱԲՈՅԱՆ - Հետազոտական ռեսուրսներն ու հասարակության առաջընթացը ----- | 171 |
| - Ի պաշտպանություն գործարարության -----                                   | 172 |